

նականներուն ուրոյն պաշտամունքի և սուրբ պատարազի համար:

բ) Վանքէն երկու հարիւր աստիճան վար, դէպի հեղեղատ ուր Մար—Սաբա բզխեցուցած է սառնորակ ջուր մը, ահագին ապառաժէ մը կաթիլթելով այլ եւ այլ տեղերէ՝ կը լեցնէ երկու փոքր աւազաններ: Ձախէն կը տեսնուի այն հնամենի արմաւենին զոր Մար—Սաբա իր ձեռքովը տնկած է ժայռի մը պատուումքին մէջ, անկորիկ են անոր արմաւենիքը: Աւանդաբար կը պատմուի թէ երբ ծառը կը չորնար ուրիշ մը կը ծլէր անոր արմատէն:

գ) Կեդրոնական գաւթէն աստիճանով մը կ'իջնեն փոքրիկ պարտէզ մը՝ ուրկէ բարձրանալով տանիք՝ կը հասնին Մար—Սաբայի մատուռը՝ որ ամբողջութեամբ փորուած ժայռի մը մէջ է: Դուռ մը որ կը բացուի մատուռին անջրպետին մէջ, հազորգակցութիւն ունի այն քարայրին հետ ուր Մար—Սաբա կէս դարու միջոցին անցուցած է իր ժամանակը աղօթքով և մեծ խտակրօնութեամբ: Քարայր—ճգնարան դրան վրայ զետեղուած է անոր մեծադիր մէկ նկարը առիւծի մը հետ որ իրեն սպասաւորած է: Այս պատկերը նկարուած է ըստ այն աւանդութեան թէ երբ սուրբը օր մը դուրս ելած էր իր ճգնարանէն՝ առիւծ մը գալով հոն պառկած էր: Մար—Սաբա Աստուծոյ ապաւինելով կը կատարէ իր սովորական աղօթքը, և անմիջապէս քունը կը տանի. առիւծը անոր թեզանիքէն կը բռնէ և դուրս կը հանէ: Մար—Սաբա կ'արթննայ, կը մտնէ քարայրը ու կը սկսի իր աղօթքին: Դարձեալ քունը կը տանի և առիւծը երկրորդ անգամ ըլլալով դուրս կը հանէ զանիկա: Սուրբը տեսնելով այս պարագան՝ խիստ ձայնով մը կ'ըսէ անասունին. երկուքի